

Մուսայելյան

Վարչական պատասխանատու՝ Վարդանյան Կարեն

Հեռ 093-60-29-77

Մակերես՝ 12.8կմ²

Բնակչություն՝ 408

musayelyan.shirak@mta.gov.am

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Մուսայելյան գյուղական համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքի հյուսիս արևմտյան մասում:

Շիրակի մարզի Աշոցքի տարածաշրջանի Մուսայելյան համայնքի նախկին անվանումը Բոզոխուշ է, որը ձևավորվել է 1862թ. Արևմտյան Հայաստանի Մասիս գավառի Մեզիղլադա գյուղից գաղթած գաղթականների կողմից:

Համայնքն ունի եկեղեցի, որը կառուցվել է 1896թ.: Եկեղեցին օծվել է 1897թ.:

Մուսայելյան համայնքի տարածքում կա 2 գերեզմանոց, որոնցից մեկը հունական է մյուսը՝ հայկական:

Համայնքն ունի 1941-1945թթ պատրագմում զոհվածների հուշարձան:

1935թ. համայնքում կազմակերպվել է կոլտնտեսություն, որը գայատնել է մինչև 1972թ. հետագայում նրա բազայի վրա կազմակերպվել է պետական տնտեսություն, որը լուծարվել է 1991թ.:

1988թ. երկրաշարժից հետո համայնքը վերակառուցվել է Ուկրաինիայի Վիննիցայի մարզի շինարարների կողմից:

Մուսայելյան համայնքն ունի բուժկետ, համայնքում կառուցվել է նաև՝ պետբյուջեի միջոցներով միջնակարգ դպրոց:

Համայնքի կենտրոնի հեռավորությունը մայրաքաղաքից 180 կմ է, մարզկենտրոնից՝

32կմ, շրջկենտրոնից՝ 15 կմ: համայնքի գտնվում է բարձր լեռնային գատում՝ բարձրությունը ծովի մակերևույթից՝ 2020մ է :

Համայնքի վարչական տարածքը կազմում է 5220 հա:

Մուսայելյան համայնքի բնակչությունը հիմնականում գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասեն գավառից, 2013թ. հունվարի 1-ի տվյալներով համայնքում բնակվում են 408մարդ , ունի 99 տնտեսություն, համայնքի բնակչությունը պատկանում է հայ առաքելական լուսավորչական եկեղեցուն:

ՀՀ Շիրակի մարզ, գ. Մուսայելյան

Ինդեքս՝ 2808